ՏԵՂԵԿԱՆՔ

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի/Եվրոպական ներդրումային բանկի/Եվրոպական միության ֆինանսավորմամբ իրականացվող «Հայաստանի փոքր համայնքների ջրամատակարարման ծրագրի» վերաբերյալ

Հայաստանի Հանրապետությունը, շարունակելով համագործակցությունը Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ)/ Եվրոպական ներդրումային բանկի (ԵՆԲ)/ Եվրոպական միության (ԵՄ) հետ ստորագրել է հետևյալ ֆինանսական համաձայնագրերը «Հայաստանի փոքր համայնքների ջրամատակարարման ծրագրի» իրականացման նպատակով՝

1. ա) Ֆինանսավորման համաձայնագիր («Դրամաշնորհային համաֆինանսավորում»). Համաձայնագիրը կնքվել է 2011թ. հունվար ամսին, Եվրոպական Միության ի դեմս Եվրոպական Հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության ի դեմս ՀՀ Ֆինանսների նախարարության և «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի միջև (ՀՀ նախագահի հրամանագիր ՆՀ-37-Ն առ 01 մարտի 2012 թվականի): Դրամաշնորհային միջոցները կազմում են 7.6 մլն ԵՎՐՈ
2. Վարկային համաձայնագիր. Համաձայնագիրը կնքվել է Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև 2011 թվականի հուլիսի 14-ին (ՀՀ ազգային ժողովի որոշում առ 8 դեկտեմբերի 2011 թվականի, ԱԺՈ-307-Ն): Վարկային միջոցները կազմել են 6.5 մլն ԵՎՐՈ: Վարկը ուժի մեջ է մտել 2012 թվականի հոկտեմբերի 15-ին:
3. Ֆինանսական պայմանագիր. Պայմանագիրը կնքվել է Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև 2012 թվականի օգոստոսի 07-ին: (ՀՀ ազգային ժողովի որոշում առ 20 հունիսի 2013 թվականի, ԱԺՈ-076-Ն): Վարկային միջոցները կազմում են 6.5 մլն ԵՎՐՈ: ԵՆԲ-ի վարկը ուժի մեջ է մտել 2013 թվականի նոյեմբերի 04-ին:
4. Ծրագիրը նախատեսում է նաև աջակցություն տեխնիկական դրամաշնորհի տեսքով այլ դոնոր կազմակերպությունների կողմից

Ծրագրի ավարտ է նախատեսվում 2015 թվականի դեկտեմբերի 30-ը:

Ծրագրի նպատակն է՝ (ա) համայնքային ջրամատակարարման բարելավում Տավուշ, Լոռի, Շիրակ, Գեղարքունիք, Կոտայք, Սյունիք և Վայոց Ձոր մարզերում, և (բ) կեղտաջրերի մաքրման կայանների և կոյուղու կոլեկտորի վերանորոգում Տավուշ (քաղաք Դիլիջան) և Վայոց Ձոր (քաղաք Ջերմուկ) մարզերում:

Նախատեսվել էր վարկային/դրամաշնորհային միջոցներն ուղղել բնակավայրերի ՋևՋ համակարգերի բարելավման առավել կենսական, անհապաղ լուծում պահանջող առաջնահերթ միջոցառումների իրականացմանը (օր. Ջերմուկ քաղաքում ԿՄԿ-ի շինարարությունը, որն ուղղված է Սևանա լճի ջրի մաքրության պահպանմանը, Դիլիջան քաղաքի Շամախյան թաղամասի ջրամատակարարման բարելավման աշխատանքները):

Ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

Արտաքին ջրատար – 66 կմ
Բաշխիչ ցանց– 278 կմ
Տնային մուտքագծեր – 58 կմ
Ջրաչափական հորեր – 9800 հատ
Կոյուղու կոլեկտոր – 16 կմ

Մանրամասների համար տես Աղյուսակը

N	Շին օբյեկտի անվանումը	Նախագծով նախատեսված աշխատանքներ					2015 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում կատարված աշխատանքներ					Առ այսօր կատարված աշխատանքներ				
		Ջրասար (մ)	Բաշխիչ ցանց (մ)	Տնային մուտքագիծ (մ)	Անհատական սնային Ջ/Հ (հատ)	Կոյուղու կոլեկտոր (մ)	Ջրասար (մ)	Բաշխիչ ցանց (մ)	Տնային մուտքագիծ (մ)	Անհատական սնային Ջ/Հ (հատ)	Կոյուղու կոլեկտոր (մ)	Ջրասար (մ)	Բաշխիչ ցանց (մ)	Տնային մուտքագիծ (մ)	Անհատական սնային Ջ/Հ (հատ)	Կոյուղու կոլեկտոր (մ)
1	ք. Բյուրեղավան	3 130	6 141	1 042	137							3 130	6 216	1 012	137	
2	ք. Աբովյան	664	13 669	4 522	657							1 564	14 400	4 400	590	
3	ք. Սևան		19 850	5 768	818								27 985	3 650	630	
4	ք. Կապան	9 494	9 319	1 013	130	268	1 954			15	265	15 138	5 796	816	134	276
5	ք. Ջերմուկ					11 803					3 546					5 667
6	ք. Սպիտակ	5 867	20 629	10 241	1 235		5 819		1 300	190	359	5 819	26 751	6 940	1 226	359
7	հ. Ջրաշեն		8 142	2 023	285			625	118	27			8 289	1 449	271	
8	հ. Ախթալա	1 949	7 702	961	139								12 309	1 115	187	
9	ք. Տաշիր	8 003	29 516	9 177	1 311				2 389	178		10 576	25 259	5 994	1 034	
10	ք. Արթիկ	3 885	19 932	8 127	1 161				867			6 181	19 642	8 230	1 321	
11	ք. Գավառ		27 286	10 411	1 487			3 228	0				30 377	9300	1 322	
12	հ. Սարուխան	970	9 095	2 604	372			322	0				10 837	1665	342	
13	ք. Մարտունի		25 277	7 616	1 088			6 529	970	379	781		31 566	6391	1 242	781
14	ք. Դիլիջան	3 900	14 965	2 324	324	10 343			391	91		3 725	17 831	1 956	373	8 245
15	ք. Իջևան	19 309	33 548	8 988	1 363	210	598		957	129		18 499	27 634	4032	697	94
16	հ. Ազատամուտ	805	5 825	378	54	1 066			6			983	5 848	236	39	840
17	ք. Ճամբարակ	2 788	13 678	3 073	439								7 604	1 188	198	
18	ք. Դիլիջան ԿՄԿ															
19	ք. Ջերմուկ ԿՄԿ															